ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԹԵՐԹԻԿ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

Funded by the European Union

Հայաստանում ականազերծման ազգային կառույցների կարողությունների հզորացում

Իրականացման ժամանակահատված: 09.11.2022 - 09.05.2024

ԱԼԳ երկրներ:

Armenia

ԵՄ ներդրում: € 1 750 000

Ընդհանուր բյուջե: € 1 750 000

Իրականացնող կազմակերպություն(ներ):

UNDP

Սոցիալական ցանցերում օգտահաշիվների հղումներ:

Նախագծի նկարագրություն:

Ծրագիրն ուղղված է Հայաստանի Հանրապետությունում 1990-ական թվականներից ի վեր Լեռնային Ղարաբաղի հակամարտության հետևանքով ականների և պայթուցիկ զինամթերքի աղտոտվածությամբ պայմանավորված մարտահրավերները դիմակայելուն: 2020թ. սեպտեմբերին ԼՂ հակամարտության վերսկսումը, այնուհետև 2022թ. սեպտեմբերի 13-ին և 14-ին տեղի ունեցած լայնածավալ ռազմական գործողությունները հանգեցրեցին հակամարտությունից տուժած շրջաններում, այդ թվում ՀՀ սահմանամերձ մի շարք շրջաններում լրացուցիչ աղտոտվածության՝ ուղղակի սպառնալիք առաջացնելով սահմանամերձ համայնքների բնակչությանը: Ծրագրի նպատակն է բարձրացնել ականներից և պայթուցիկ զինամթերքից տուժած համայնքներում կանանց, տղամարդկանց և երեխաների անվտանգության մակարդակը, ամրապնդել համայնքների պատրաստվածությունն ու պաշտպանությունը, ինչպես նաև բարելավել ականազերծման գործողությունների ազգային կառույցները՝ ականների և պայթուցիկ զինամթերքի հետևանքով առաջացած խնդիրները հակաականային գործունեության միջազգային չափանիշներին համապատասխան լուծելու համար:

Ակնկալվող արդյունքներ:

1. Ականազերծման գործողությունների ազգային ծրագիրն ու ազգային մարմինը՝ ՀԱՓԿ-ը, գործելու են հակաականային գործունեության միջազգային չափանիշներին լիովին համապատասխան : Աղտոտված տարածքները մաքրված են լինելու ականներից և պայթուցիկ զինամթերքից:
2. ՀՀ-ում հակաականային գործունեության ոլորտը համակարգվելու է համակարգող հարթակի ստեղծման և գործարկման միջոցով, որտեղ ներգրավված են լինելու հակաականային գործունեության ոլորտում ակտիվ բոլոր հիմնական դերակատարներն և շահագրգիռ կառույցները:
3. Ամրապնդվում են ռիսկերի ուսուցման, զոհերի աջակցության և արտակարգ իրավիճակների պատրաստության և պաշտպանության ոլորտները՝ ի նպաստ պայթուցիկ զինամթերքի աղտոտվածությունից տուժած բոլոր համայնքների: